




«ԹՈՂ ՏՈՒՆԷ ՄԱՆԷ ՏՂՈՅԷ ՈՐ ԻՆՈՒ ԳՄԱՆ» : ԴՈՒԿ. ԺԸ. 16 :

Հ Ա Տ Ո Ր Ե .

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ . ԳԵՏԵՄԲԵՐ 1 . 1876 .

ԹԻՒ 12



ՃԱՄԲՈՐՄԵՐԸ ԶՈՐՍ ՕՐ ԾՈՎՈՒՆ ՄԷՋ ԱՆՕԹԻ ՍՆԱՅԻՆ

բորգներն առհասարակ, վաղեցին նաև առաջադասական մեծին վրայ: Աստիք նախ ոչ կրակ և ոչ ծուխ առան, վասն զի գիշեր էր, և հրդեհը նաև առաջադասական մեջ էր: Նաև առաջիններն ամբարձրին բոլոր դռները և պատահանները դուրս էին կրակը մարելու համար, և առաջադասականն նոր ծակեր բանալով ներս չուր կը վաղցնէին: Երբ նաև առաջիններն նոր ծակ մը բացին, անկէ մարդու հասակի բարձրութեամբ բոց դուրս ելաւ, և նաև առաջիններն այն ծակէն ջրմուղը ներս մտցնելով բաց տեղերը թաց առագաստի կտորներով կը դոյնէին, այնպէս որ բոցը դարձեալ անասանների կըլլար: Շատ աշխատեցան կրակը մարելու, բայց ի զուր: Վերջապէս բոցերը մէկէն ամբարձր դուրս ելան: Ահաբեկ նաև բորգներն սկսան լալ, դուրս և ագոթել: Նաև առաջադասականները ծովն իջեցնել, և նաև առաջադասականն մէջ գտնուած բոցը մարդիկ մակայիկները նստան: Մակայիկները նաև առաջադասականն զովէն զատուելով մտնի մէջ մնացին, և այն գեղեցիկ նաւը կրակի և բոցի մէջ ձգուեցաւ:

Ճամբորդները եւ նաև առաջիններն ազատեցան, բայց չորս օր անօթի և ծարաւի ծովին մէջ անձրեւին տակ մնացին:

**ՆԱԿՈՒ ՄԷՋ ՀՐԴԵՋ**

Ի՞նչ անեղ տեսարան: Վերի պատկերին մէջ տեսնուած մեծ նաւը բռնկած է:

Այս նաւը Պոլիս գալու համար Անգլիայէն ճամբայ ելած էր: Նաւը մեծ և հաստատուն էր, պարանները նոր, առագաստները զիմացկան և մարտը էին: Բոլոր նաւորներն ապահով էին թէ յաջող նաւարկութիւն պիտի ընէին: Սակայն մինչդեռ նաւը Միջերկրական ծովուն մէջ տեղն էր, գիշեր մը յանկարծ մէկը սենեակներուն դուռը զարնելով, «Ելէք, ելէք, հրդեհ կայ» դուչեց:

Գիշերները երբեմն, «Հրդեհ կայ»

պուռացող պահանջներուն ձայնը լսած էր: Պահանջներն այս ձայնը սրտի անարկու է, մանուսագ եթէ հրդեհը մտա տեղ է: Եթէ կրակը ձեր տաներուն մտանայ, առները թողլով կրնաք փախչիլ: Բայց նաև մէջ այնպէս ընել կարելի չէ: Թէև նաւը նաւորներուն առներ կը համարուի, սակայն ցամաքի տաներուն պէս չէ: Եթէ նախ մէջ հրդեհ պատահի, մարդիկ չեն կրնար զայն թողլով փախչիլ, վասնզի ամէն կողմ ջուր է: Առտի կրնաք խորհիլ թէ նաւորներն որչափ անօթ լցուեցան երբ լսեցին այն չարաչուք ձայնը, «Հրդեհ կայ»: Այր, կին և աղայ, բոլոր ճամ-


ԻՐ ՎԻՃԱԿԵՆ ԳՈՂ ՀՈՂԱԳՈՐԾ ՄԸ  
 Ժամանակաւ Բրուսիոյ Փրեզերիկա  
 Թագաւորը ծագեալ կը պատէր, և  
 տեսնելով հողագործ մը որ խնդու-  
 թեամբ և երգելով կ'աշխատէր արտի  
 մը մէջ անոր մօտ գնաց և հարցուց.  
 «Հայրիկ, կը տեսնեմ որ դո՞ւ և զը-  
 ւարթ սիրտ ունիս. այս արտը քնկդ  
 է:»

Հողագործը չզիտնալով թէ ով էր  
 որ իր հետը կը խօսէր, ըսաւ. «Ոչ,  
 տէր իմ, ես հարուստ չեմ, վարձկան  
 գործաւոր եմ:»

Երբ թագաւորն անոր հարցուց թէ  
 օրը քանի դահեկան կը շահէր, հո-  
 ղագործը պատասխանեց. «Օրը հինգ  
 դահեկան կը շահիմ:» Թագաւորը նո-  
 րէն հարցուց անոր. «Օրական վարձդ  
 շատ չէ, այսչափ ստակով կրնան ապ-  
 րիլ:» Հողագործը պատասխանեց.

«Այո, ոչ միայն կ'ապրիմ, այլ և քիչ  
 մը բան կ'աւելցնեմ:» Թագաւորը  
 երրորդ անգամ հարցուց. «Ինչպէս  
 կրնաս այսչափ օրականէն բան աւել-  
 ցնել:» Հողագործը ծագելով պա-  
 տասխանեց. «Յիսուն փարա կը բաւէ  
 իմ և կնոջս ապրուստին. յիսուն փա-  
 րա կուտամ հին պարտքերս հատու-  
 ցանելու. յիսուն փարա ուրիշներու  
 փոխ կուտամ. յիսուն փարա ալ Աս-  
 տուծոյ սիրոյն համար սղորմութիւն  
 կուտամ:» Թագաւորն ըսաւ. «Այդ  
 բանն ինձի համար անհասկնալի ա-  
 ուեղծուած է:» Հողագործն ըսաւ.  
 «Ուրեմն, ես այս աւելցուածը լու-  
 ծեմ. Տունը ձերունի հար և մայր մը  
 ունիմ. երբ ես տկար և այլոց օգնու-  
 թեան կարօտ էի, անոնք զիս սնու-  
 ցին. Հիմա անոնք տկար և օգնու-  
 թեան կարօտ են, ուստի ես զանոնք  
 կը սնուցանեմ: Ասիկա իմ պարտքս  
 է. Յիսուն փարան, որուն համար ը-  
 սի թէ ամէն օր կուտամ հին պարտ-  
 քերս հատուցանելու, այն ստակն է  
 զոր ծնողացս ապրուստին համար կու-  
 տամ: Միւս յիսուն փարան որուն  
 համար ըսի թէ փոխ կուտամ, այն  
 ստակն է զոր զաւակացս դատախա-  
 կութեանը համար կուտամ, որպէս զի  
 Քրիստոնէաբար կրթուին: Երբ ես  
 ու կինս կը ձերանանք, մեր զուկնե-  
 րը մեզի միթիթարութիւն պիտի ըլ-  
 լան, և մեզի պիտի հատուցանեն այն  
 ստակը զոր այժմ փոխ կուտանք ա-  
 նոնց: Մնացեալ յիսուն փարայով ալ  
 քայրերս կը խնամեմ: Քայրերս խնա-  
 մելու պարտական չեմ, սակայն կը-  
 նեմ Աստուծոյ սիրոյն համար:» Հո-  
 ղագործին այս պատասխանը շատ հա-  
 ճելի եղաւ. թագաւորին, որ անոր ը-

սաւ. «Հիմա, ես ալ քեզ աւելցուած  
 մը պիտի բռնեմ. Ասիկէ առաջ զիս  
 տեսնած էիր:» Հողագործը պատաս-  
 խանեց. «Ոչ, տեսնած չէի:» «Հինգ  
 վայրկեանէն յիսուն անգամ պիտի  
 տեսնես զիս, և իմ պատկերներէս  
 յիսուն հատ գրպանիդ մէջ պիտի  
 դնուի:» ըսաւ թագաւորը: Հողա-  
 գործն ըսաւ. «Ես ալ այս աւելցուած  
 ըլլեմ հասկնար:» «Ուրեմն,» ըսաւ  
 թագաւորը, «աւելցուածը լուծեմ:»  
 և ձեռքը գրպանը ասնելով յիսուն  
 հատ նոր կարուած ոսկի դրամ հա-  
 նեց, և հողագործին որ ապշած  
 կընայէր, առաւ այն ոսկիները և ըսաւ.  
 «Այս գրպաները կեղծ չեն. մեր Տէր  
 Աստուծոյ են, և ես Աստուծոյ մատու-  
 կարան եմ:» և, «Մնաք բարով» ըսե-  
 րով մեկնեցաւ:



ՆԱԽԱՎԱՐ ԲՁԷՋՆԵՐ. — ԶՐԱՅԻՆ ԿԱՐԻՃՆԵՐ

ՏԱՐՈՐԻՆՍԿ ԲՁԷՋՆԵՐ

Վերի պատկերին մէջ երկու տեսակ  
 բզէզ կը տեսնուի. Մեծ տեսակ բզէ-  
 զը երկճիղ աղի ունի, և կը կոչուի  
 ջրային կարիճ: Պատկերին մէջ տես-  
 նուած փոքր տեսակ բզէզները որ  
 աղի չունին՝ նաւալար բզէզ կը կոչ-  
 ուին:

Ջրային կարիճ կոչուած բզէզներն  
 ուրիշ միջատներ կ'որսան. Չանոնք ի-  
 րենց առջևի սուրբերով բռնելով ա-  
 նոնց ներսի դիւն կը լսոթեն իրենց սուր  
 կտուցը զոր պատկերին մէջ կը տես-  
 նէք, և անոնց հիւթը կը ծծեն: Այս  
 բզէզները կրնան օդին մէջ թռչիլ և  
 ջուրին մէջ լողալ: Այս տեսակ բզէզը  
 կարիճ կը կոչուի իր ազոյն պատճա-  
 րաւ, որ ահաւոր կ'երեւի, բայց չունչ

առնելու գործարան է: Սակայն եթէ  
 այն բզէզներէն մէկը ձեռքով բռնե-  
 րով դիտէք, պիտի տեսնէք որ ան  
 կրնայ իր սուր կտայով լսայթել, իսկ  
 ազուովը բան մը չի կրնար ընել:

Նաւալար բզէզներն այսպէս կը  
 կոչուին, վասն զի կրնան իրենց կըռ-  
 նակին վրայ կենալ ջուրին երեսը, և  
 իրենց սուրբը թիակներու պէս դուր-  
 ծածելով կրնան լողալ: Այս բզէզնե-  
 րը շատ արագ կը շարժին և ուրիշ մի-  
 ջատներ ուտելով կ'ապրին ջրային կա-  
 րիճներու պէս: Ունին նաև թևեր  
 որոնցմով արագ արագ կը թռչին:

ԱՆՅԵՍԱՄԱՐՈՅ ՀՍՐՅՄԱՆ ՊՍՍԱՍԻՍՆ

«ՆՍ ԱՆ ՄԱՐԿԸ ԶԵՄ ՃԱՆՉՆԱՐ»

Հարցման մէջ յիշուած ապարանքը  
 կայիափայի ապարանքն էր: Մարդը  
 որ դաւթին մէջ կը կենար Պետրոս էր:

Պետրոս վախկոտութիւն ըրաւ,  
 երբ ըսաւ թէ, «Ես ան մարդը չեմ  
 ճանչնար:» Կը յիշէք, Պետրոս առաջին  
 անգամ ո՞ր և էրք տեսաւ զՔրիստոս:  
 Օր մը Յիսուս ժողովրդեան քարո-  
 ղելու սկսելէն ետքը ծովակին քովը  
 դնաց, և մեծ բազմութիւն մը անոր  
 ետեէն գնաց Աստուծոյ խօսքը մտիկ  
 ընելու: Պետրոսի նաև հոն, ծովա-  
 կին եզրն էր: Պետրոսի որսակիցներն  
 իրենց ուսկանները կը լուային: Յի-  
 սուս նաև մտաւ, և Պետրոսին ըսաւ.  
 որ ցամաքէն քիչ մը բացուի: Յիսուս  
 նաև նստաւ և հոն սկսաւ քարոզել,  
 որպէս զի բոլոր ժողովուրդը կարե-  
 նար զանի տեսնել և անոր վարդա-  
 պետութիւնը ընել: Միւս ձկորսներն  
 ալ եկած էին, երբ Յիսուս խօսքը  
 լինցուց, և ըսաւ Պետրոսին. «Առաջ  
 տար նաւը դէպի խորունկը, և ուս-  
 կաններնիդ ձգեցէք:» Պետրոս անոր  
 պատասխան տուաւ. «Բոլոր գիշերս  
 աշխատեցանք ու բան մը չբռնեցինք:»  
 Պետրոս ուսկանը ծովակը նետել ա-  
 ւելորդ աշխատութիւն կը համարէր,  
 բայց Յիսուսի խօսքը չկարելու հա-  
 մար հաւանեցաւ ուսկանը նետել:  
 Չկորսները քիչ մը խորունկը բաց-  
 ուեցան, և ուսկանները նետելով  
 ձուկեր ժողովեցին: Այս բանին վրայ  
 ամէնքն ալ զարմանալով վախցան,  
 վասն զի զիտցան թէ հրաշք էր: Ան-  
 ատեն Պետրոս Յիսուսի ծուկերուն  
 ինկաւ, և մեղքերը խոստովանելով

այն օրէն սկսու անոր աշա-  
կերա ըլլալ : Այնուհետև  
Պետրոս ուրիշ շատ հրաշքներ  
ալ տեսաւ, և Յիսուսի քովը  
կը կենար : Պետրոս օր մը ա-  
ռաջ Յիսուսին ըսած էր ,  
« Թէև քեզի հետ մեռնելու  
ալ ըլլամ՝ ընաւ քեզ պիտի  
չուրանամ : » Բայց հետևեալ  
օրն ըսաւ . « Ես ան մարդը  
չեմ՝ ճանչնար , » և երգում ը-  
բաւ : Պետրոս այսպէս վախ-  
կա գտնուեցաւ , վասն զի  
օգնութիւն չի ստացուց Յի-  
սուսէն :

Արդ ինձ կը թուի թէ ազայ  
մը այսպէս կը խօսի . « Եթէ  
ես ըլլայի Պետրոսին տեղը ,  
անոր պէս վախկա չէի ըլ-  
լար : » Սակայն եթէ այն աղան  
ալ փորձութեան մէջ իյնայ ,  
ինչպէս ինկած էր Պետրոս ,  
և զՅիսուս օգնութեան չկան-  
չէր իրեն , և ազէկ մը չփա-  
րէր անոր , կարծեմ թէ այն  
աղան քաջատրտութիւնն ալ  
պիտի թուլնար :

Այն մարդը որ իր զօրու-  
թեան և քաջատրտութեանը կը վստա-  
հի ամօթահար կը մնայ . իսկ այն որ  
խոստովանի թէ անզօր է և Քրիս-  
տոսէ օգնութիւն կը խնդրէ՝ արդարեւ  
զօրաւոր և քաջատրտ կ'ըլլայ :

**ՄԻՍՅՆ ՄԷԿ**

Ձրհեղեղի ատեն մարդիկ տեղ մը  
միայն ունէին ապաւենելու , այն էր  
Նոյայ տապանը , Հիմա մենք ալ ապա-  
ւեն մը միայն ունինք , Տէր Յիսուս  
Քրիստոսը , Հին Եգիպտացիք սովի մը  
ատեն ցորեն խնդրելու համար միայն  
մարդու մը , այսինքն Յովսեփին , կը  
դիմէին , և հայ կառնէին : Մենք ալ  
մէկու մը միայն , մարդացեալ Յիսու-  
սի , դիմելով կրնանք . « կենաց հաց »  
առնել : Պատերի դիշերն Եգիպտաց-  
ւոց անդրանիկ ծնունդները կտարող  
հրեշտակին հարուածներէն ազա-  
տելու համար Հրեայք կերպ մը մի-  
այն ունէին , այսինքն պատերի դատին  
արիւնը սրսկել իրենց դրանց վրայ :  
Մենք և բոլոր մեղաւորները , երկ-  
րորդ մահէն ապրելու համար , միջոց  
մը միայն ունինք , այն է Աստուծոյ դա-



ԽՈՏԷ ԵՒՆՈՒԱՄ ԵԿԵՂԵՑԻ ՄԸ

ւին Յիսուսի Քրիստոսի արիւնն հա-  
ւատով մեր սրտերուն վրայ սրսկել :  
Երբ Եփրեմի մարդիկը Յորդանանէն  
կ'անցնէին , Շիլպօղէթ բառը միայն  
որտասանելով ազատուեցան : Արդ-  
մենք ալ խօսքով մը միայն , այսինքն  
Յիսուսին՝ անունը ըսելով , կրնանք  
փրկուիլ (Գործք. Գ. 12) :

Սիրելի ազաք , եթէ դուք չէք այն  
աղբյուրն որ Յիսուսը կը սիրեն և անոր  
կը հնազանդին , կը խրատեմ ձեզ որ  
զանի վնասէք , վասնզի անոր հնա-  
զանդելով կրնաք ձեզի տուն պատ-  
րաստել երկիրը , Աստուծոյ յաւի-  
տենական թողա սրտութեանը մէջ ,  
« Տէրը փնտուեցէք՝ քանի որ անիկա  
կը գտնուի . զանիկա կանչեցէք՝ քանի  
որ անիկա մօտ է : »


**ՖԻՃԻ ԿՂՁԻՔ**

Թերևս բուսա տեսած էք : Չենե-  
մանք որ կարգացած են նորատիպ  
գեղեցիկ աշխարհագրութիւնը որ կը  
ձախուսի Ամերիգան խանի զբառու-  
նը , գիտեն թէ Խաղաղական սվիկա-  
նոսի մէջ կան կղզիներ որ բուստերէ  
կազմուած են :

Խաղաղական սվիկանոսի մէջ Ֆիճի  
կղզիք բուստէ կազմուած են : Իբր  
երկու հարիւր կղզիք կան Ֆիճի  
կղզեաց խումբին մէջ , սակայն անոնց-  
մէ ութսունը միայն մարդաբնակ են :  
Ֆիճի կղզեաց բնակիչներն առաջ  
կուտաբաշտ և մարդակեր էին , և չէին  
գիտեր թէ ինչ է բնասանական սիրոյ  
քաղցրութիւնը : Քառասուն տարի ա-  
ռաջ Մեզդիացի միսիոնարներ Աւե-  
տարան քարոզել զայցին այն կղզեաց  
բնակիչներուն , և արդէն շատ մեծ  
փոփոխութիւն եղած է անոնց վիճա-  
կին մէջ : Հազարաւոր մարդիկ Քրիս-  
տանեայ եղած են , վայրենի սովորու-  
թիւնները կամ բոլորովին թողուած  
կամ մեծաւ մասամբ նուազած են ,  
կուտավարութիւն և օրէնք հաստատ-  
ուած են և ամէն տեղ զպրօցներ բաց-  
ուած են :

Ֆիճի կղզեաց բնակիչները խոստէ  
կը շինեն իրենց տուները : Վերի պատ-  
կերին մէջ կը տեսնուի եկեղեցի մը  
որ Ֆիճի կղզեաց մէկուն մէջ շինուած  
է խոստէ : Եթէ աշխարհացուցին նա-  
յէք , պիտի գտնէք Ֆիճի կղզիները ,  
Նոր Զեւանաէն 1,200 մղան դէպ ի  
հիւսիս :

ՅՈՐԳՈՐ ՏՂԱՅՈՑ



1. Կըլլան հաւատացեալ մը Մանկութեանդ մէջ. Կըլլան հաւատացեալ մը մանկութեանդ մէջ. Դան-

դալ, ծոյլ լինելու չես, Յիսուսի շուտ դիմելու ես, Արարիչն այժմ յիշելու ես, Մանկութեանդ մէջ:

2.

Փրկիչն սիրել յօժար ես  
Մանկութեանդ մէջ.  
Թողաց երկնից պարծանքը,  
Քեզ համար կրեց տանջանքը,  
Եւ քու անզգ ատաւ իր կեանքը,  
Մանկութեանդ մէջ:

3.

Յիշէ, մեռնիլ հնար է  
Մանր աղոց ալ.  
Կ'ողբան կուրան մայրերը,  
Եւ վերէն պոյճաւ ասաղերը  
Կը հոկեն զերեգմանները  
Մանր աղոց ալ:

4.

Ուստի դարձիր Տէրօջը  
Մանկութեանդ մէջ.  
Մեղք է ուշացընելը,  
Եւ անզեղ մահուամբ նընջելը,  
Եւ դըժոխք անյայտ իջնելը,  
Մանկութեանդ մէջ:

5.

Փառաց ճամբան ընտրէ դուն  
Մանկութեանդ մէջ.  
Յիսուս պիտի օգնէ քեզ,  
Փորձանքէն ալ ազատէ քեզ,  
Եւ սրբախօսութիւն խրկէ քեզ  
Մանկութեանդ մէջ:

ՇԻՇԻ ՄԷՋ ԽՆՁՈՐ

Մեծ մօրս սենեակին դարանին վրայ շատ մը գեղեցիկ և զարմանալի բաներ կային: Հոն շիշ մ'ալ կար սրուն մէջ խնձոր մը դրուած էր: Խնձորն այնչափ մեծ էր որ շիշը լեցուցած էր, և շիշին բերնէն դուրս չէր կրնար հանուիլ: Չարմանալով այս բանին վրայ կը խորհէի թէ այն խնձորն ինչպէս մուծուած էր շիշին մէջ: Օր մը, երբ մինակ էի սենեակին մէջ, ակտուի մը վրայ ելլելով սկսայ քննել թէ շիշը պտուտակով բացուելու և դոյուելու տեղ մը ունէ՞ր, կամ անոր վրայ ետքէն փակցուած կտորի մը նշան կար: Բայց անտեսելով որ շիշն վրայ այնպիսի բան մը չկար, աւելի հետաքրքիր եղայ հասկնալու թէ խնձորն ինչպէս դրուած էր անոր մէջ:

Երբ օր մը պարտեղը կը պտտէի, այս գաղտնիքը հասկցայ: Շիշ մը տեսայ որ ծառի մը ստախ կապուած էր, և շիշն մէջ տեսայ փոքրիկ խնձոր մը: Այս խնձորն երբ շատ փոքր էր, այն շիշն մէջ դրուած էր և հոն կ'աճէր: Այսպիսի փորձ մըն ալ մենք ըրինք ժամանակաւ ձմերուկի մը վրայ: Խո-

շոր շիշն մը մէջ փոքրիկ ձմերուկ մը դրինք առանց կարելու զայն տունկէն: Չմերուկը հեաղհեաէ անեցաւ և շիշը լեցուց, ապա ձմերուկը կըտրեցինք առանկէն, և շիշը սգիտով (եփեփեփ) լեցուցինք: Օր մը փորձեցի ձմերուկը շիշէն դուրս հանել, բայց այնչափ խօշորցած էր որ չկրցայ, եւ այն ձմերուկը դեռ թարմ ձմերուկի պէս կը կենայ շիշին մէջ:

Այսպէս երբ մեղքերը աղոց սըրտերուն մէջ կը մանեն, հեաղհեաէ կ'աճին, և այնուհետեւ դիւրին չէ դանակը դուրս հանել:

ԾԵՐ ԿՕՏԿԱԿԱՐԸ

Փողոցին մէկ անկիւնը փոքր խանութի մը մէջ ծեր կոշկակար մը կայ: Այս մարդուն բոլորաբըր միշտ մութի կապրներով, մու ճակներով և կօշիկներով լեցուն են, և ամէն անգամ որ անկէ կ'անցնիմ, կը տեսնեմ որ ծերունին ժրուժեամբ կ'աշխատի: Երբեմն կը տեսնեմ որ այն մարդը ձեռքի մուրճով մուճակին գամեր կը զարնէ, և երբեմն դերձանը մամե-

լով մուճակին տակի կային կը կարէ: Երբ օր մը այն խանութին առջեւն կ'անցնէի, տեսայ որ երկու տղայք եկան հոն, և ծերունի կոշկակարը շատ ուրախացաւ այն աղոց գալըստեան վրայ: Տղայք ըսին անոր. «Եկանք որ մեզի պատմութիւն մը ըսես»: Ծերունին պատասխանեց. «Թողէք զիս որ քէչ մը խորհիմ. դուք նոր պատմութիւն կ'ուզէք, բայց պատմութիւններս հատան, ալ պատմելու բան մը չունիմ»: Այս միջոցին աղոց մին հետեւեալ հարցունք ըրաւ. «Հայրիկ, միշտ կը տեսնեմ որ



ԻՆՁՈՒ ՈՒՐԱՆ ԶԵԼԼԱՍ

ուրախ և զուարթ ես, ի՞նչ է ասոր պատճառը»: Կոշկակարը պատասխանեց. «Տղաս, ինչո՞ւ համար ուրախ չըլլամ: Մարդ չեմ խաբեր, զինի չեմ լամեր, միշտ կ'աշխատիմ և մարդու կարօտ չեմ: Գիտեմ որ Տէր Յիսուս Քրիստոս զիս կը սիրէ, և մեղքերս ինծի ներած է: Ուստի միշտ պարտաւոր եմ փառք և դուստիւն մատուցանել Աստուծոյ: Այս բաները բաւական չե՞ն ուրախ ընելու իմ սիրտս: Գուրտէն երբեմն վիշտեր կ'ունենամ, բայց ներսիդիս միշտ հանդիս է, վասն զի հոն կայ Աստուծոյ սէրը:»

Եթէ միտքը դրած ես անպիտան բան մը ընել, ոպասէ մինչեւ վաղը, իսկ եթէ աղէկ բան մը պիտի ընես, անմիջապէս ըրէ:

Ամերիկայի միսիոնարաց ընկերութեան կողմէն  
Խմբագիր Ճ. Ք. ԿՐԻՆ  
Ֆիլանմորաւ եօզուշու, Ամէրիկան խան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵՆՆ  
Չագագծըլար, Յակոբեան խան, Թիւ 12.